ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **29/նոյեմբերի/2022 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ...12... անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, Գնդեվազ և Կեչուտ գյուղերի վարչական ղեկավարներ Սևակ Մկրտչյանը և Արտակ Բագրատյանը, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հավաքագրման և հաշվառման բաժնի պետ Արմինե Ղազարյանը

Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վահագն Արսենյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը

Լսեցին
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 29-ի արտահերթ նիստի հետևյալ օ ր ա կ ա ր գ ը.

1.1. Դրամական հատկացում կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----12---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95-Ա/

Լսեցին
ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Հաշվի առնելով Ջերմուկի քաղաքի «Մաքսիմ Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոց» պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի տնօրենի դիմում-խնդրանքը՝ Ջերմուկ համայնքի վարչական բյուջեից «9-2-1-51 - հիմնական ընդհանուր կրթություն» գործառնական դասակարգմամբ «4637-ընթացիկ դրամաշնորհներ պետական կամ համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածով 2022-2023 թթ. ուսումնական տարվա համար դպրոցին հատկացնել 2,800.000 /երկու միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ Ջերմուկ համայնքի տարբեր բնակավայրից աշակերտների տեղափոխումը կազմակերպելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----12---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Արսենյան Վահագն Աշոտի	
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	
Վարդազարյան Աննա Վասակի	
Խաչատրյան Գոհար Բաբկենի	
Համբարձումյան Մխիթար Սամվելի	

Այվազյան Մխիթար Վոլոդյայի	
Մկրտչյան Մարինե Մայիսի	
Բաբայան Ժիրայր Ժորայի	
Մնացականյան Արկադի Ալբերտի	բացակա
Գևորգյան Մանան Աղվանի	
Վահանյան Վարուժան Կնյազի	
Հովակիմյան Ազատ Հայրիկի	
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	բացակա

Ջերմուկ համայնքի ղեկավար՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը_____